



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

3198

491.99-8

U-44

1903

1904 № 647

3097

1. ԱՂԱՅԵԱՆՑ



491.99-8
U-44

ԹԻՖԼԻՍ [1903]

2002

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ИЗУЧЕНИЯ
Исторических Наук

գրմ-ւ
3097

9199-8
Ա-44



ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱՐԵՋԱՐԴԱԾ ԵՒ ԿՐԿՆԱՊԱՏԻԿ ՃՈՒՍՅՐԱԾ



БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ПСИХОЛОГИЧЕСКИХ
НАУК
Академии Наук
СССР

ՅՕՐԻՆԵՅ Ղ. ԱՂԱՅԵԱՆՑ
ՄԵԾԵՐԻ ԵՒ ՓՈՒՔՐԵՐԻ ՀԱՄԱՐ

ՄԵԾԵՐԻ ՀԱՄԱՐ ԻՐԲԵՒ ԻՆՔՆՈՒՍՈՒՑԻՉ

Հեղինակի սեփական եւ փոխադրած յօդածների արտատրվելու իրաւունքը վերապահւած է.

Թ Ի Ֆ Լ Ի Ս [1903]

Տպարան Մովսէս Վարդանեանցի



საქართველოს რეპუბლიკის
განათლების მინისტრის განკარგულებაში

საქართველოს რეპუბლიკის
განათლების მინისტრის განკარგულებაში


Дозволено Цензурою. 28 Октября 1903 г. Тифлисъ.



50494-სს

САНКЦИОНАЛЬНАЯ
БИБЛИОТЕКА
ИМ. А. МАСНИЯНА
ТБИЛИСИ

36212-66




ა-თამ

ა-თამ

მათ

ამ | მამ | თამ | თათ | მათ | ა-თამ



მათი

თათ

ათათ

ათათ	მათ	მათ-თათ	თათ-თათ
თათ	თათ	ათ-ათათ	თათ ათათ
ათ	ათათ	ათ-ათ-თათ	ათ მათათ

ათათ მათათ მათათ



Ա Ա Ր արտ

Մա-սիս	արտ	Արա-րատ	Ա-րամ
ա-սա	տար	ար-մատ	Ար-շամ
ա-րա	սիրտ	ա-միս	Ար-մաշ

Չա-միր, արի մի մա-տիտ տամ:
 Չա-մի-րամ, ա-րի մի մա-շիկ տար տա-տիս:

ա ա ր ր . ա ա ր . ե ե ր ա ր ա ր
 11 մ ա ս ի ս . ե ի ս . ե ի ս ր ա ա .

տուն
 շուտ
 մուր



շուն
 նուշ
 տուր

տ ու ն շ ու ն

Արամ, ուրիշի նա-տա-րա-նին մի նա-տիր:
 Չա-մի-րա-մը մի սի-րուն մա-տա-նի ունի:
 Չա-միր, արի Մի-նա-սին տար տուն:
 Ա-սա-տուր, արի շուտ-շուտ ասա—

Տարամաս—տարամաս—տարամաստարա

ա ա ր . ե ե ր ա ր ա ր
 շ ու ե . ա ն ու ե . ու ս ի ե . ր ր .

կա-տու
 կը-տակ
 կը-րակ
 կը-տամ



մու-կը



ընկ-նիմ
 ընկ-նիս
 ընկ-նի

կ ա տ ու ն ու մ ու կ ր

Մա-կար | Ար-շակ | Կամ-սար | Նու-նիկ | Չու-շիկ

Նունիկը շուտ շուտ կասի—
 Ուշի—Ուշական—Մաստարա
 Կամսարի կրակին կասկարա



կասկարա

կ կ ր . մ ու կ ր . կ ր ր ա ս կ . կ ր =
 ր ա ս կ . կ ա մ ս ար . մ ա կ ար . ր ա ր .

է	էին	տէր	է միր
է ս	ասէի	սէր	Սու-րէն
է ն	ասէիր	մէկ	Ար-սէն
է ի	ուտէիր	էմին	Կա-րէն



է շ է

Տէր Ար-սէ-նը Սու-րէ-նի տանու տէր-տէրն է: Է-մի-նը շատ է սի-րում իր տա-տի-կին:

է ե յ ե ա ե ն ե ի ե ի ր
 է ե մ ի ր ե մ ի ն շ ա շ ա ն

Մինասի էշը.

Մինասի էշը մըտնում է էմինի արտը: Էմինն ասում է.
 —Է... իշատէր Մինաս, իշատէր Մինաս... էշն արտն ուտում է:

Մինասն իմանում է, սուս է անում: Էմինը կըրկ-նում իրանը, Մինասը սուս է: Էմինն ասում է.

—Է՛շ, էշ, արտս Մինասն է ուտում, արի սրան տար:



Մինասի էշը արտումը

ե	ե	ե	ե զ
ե	ե	ե	զուր
ե ս	զ	զ	զուտ



եզ-ներ

մ ե ր	ե-րես	Նա-զիկ	Չա-նա-զան
կ ե ր	ե-րազ	եզ-նիկ	կե-րա-կուր
ս ա զ	ա-զատ	Ար-զու-ման	ե-րե-րուն
կ ա զ	Չա-նի	ե-րե-մի-ա	եզ-նե-րում

Արամն ու Ար-զու-մա-նը ըն-կեր-ներ են: Նազիկը երկար ու շէկ մազեր ունի:

ե ե զ զ ե զ ն ե ր ե զ ն ի կ
 շ ա շ ա ն ի կ զ ա զ ի կ մ ե զ

Արզումանի եզը

Արզումանը մի եզն ունէր՝ անունը Կարմիր: Կարմրին շատ էին սիրում Արզումանի տանը ու նրան կերակրում էին շուտ շուտ: Նրա մազերը կարմիր էին ու սիրուն:

Արամի եզը

Արամը եզն ունէր, մի շատ սիրուն եզ. Սիրուն, սիրուն, մի շատ սիրուն եզ:

Անունը կարմիր էր, մազերը կարմիր.
 Կարմիր, կարմիր, մազերը կարմիր:
 Կարմիրն սիրում էին նազիկն ու Զանին.
 Զանին, Զանին, նազիկն ու Զանին:




Սա է Արամի եզը



ոզնի խոզ

զոխ	խոզ	որս-կան	մա-խոխ
ոտ	մուխ	կը-տոր	մե-խակ
ոստ	խակ	խը-մոր	մա-նու-շակ
որ	սոխ	մորի	Աս-տրա-խան
խոտ	ո-րոմ	մո-րեխ	Սու-րա-խան
խոր	ոս-կի	մո-խիր	շի-րա-խա-նա

Սոխն ու սրխտորը իրար շատ են սիրում:
 Սոխը մէկ է, սրխտորը երկու:



Մըկան խրատը

Ոզնին շարունակ մըլկնիկներ էր որսում ու իր ոզնիկ-ներին կերակրում: Մի սիրուն մկնիկ մի կատու է խոս-նում ու ասում նրան.

—Մեր տէր ու տիրական Կատու, Ոզնին մեզ կտա-րում է. արի ազատիր մեզ:

Կատուն ասում է.

—Եկ իմ կշտին ազատ ման արի, ես կը չսաստեմ Ոզնուն:

Մըկնիկի մէքը տեսնում է որ Կատուն սրում է ա-տամները, ասում է.

—Իմ սիրունիկ մըլկնիկս, Կատուն կըսաստի ուրիշնե-րին, որ մեզ մեն-մենակ կտառի:

—Ո՛ւ—ու—ո՛ւ... զարմանում է մկնիկը ու շուտ մտնում է իր տնակը:



ո շ խ ա ր


ոշ | շը | շի | շէ | շեմ | շես | շէի | շէր | շէր

ինչ	չիր	չըն-չին
ինչո՞ւ	չան	չա-չա-նակ
չորս	չիմ	իսա-չիկ
չոր	չա-միչ	իսա-չա-տուր
չար	ոչինչ	Չի-նա-ստան

Չի-նա-ստա-նը մի ուրիշ երկիր է:

Տատիկը խաչիկին ասում է. — Խաչիկ, ա-րի, չիր ու չամիչ տամ, կեր:

Խաչիկը չի ուզում, ասում է. — Ես չիր ու չամիչ չեմ սիրում:



Ո չ խ ա ը ն ու խ ո զ ը

Խոզը ոչխարի կշտին արմատներ էր ուտում, ոչխա-րը տեսնում է նրան ու ասում է.

— Մէրունիկ, ինչո՞ւ խոտ չես ուտում:

— Ես կուշտ եմ, ասում է խոզը:

Ոչխարը զարմանում է, որ խոզը կուշտ է, ասում է.

— Որ կուշտ ես, ինչո՞ւ արմատներ ես ուտում:

— Արմատները անուշ են ու մարսական, չարագ եմ անում, — ասում է խոզը, որ ամեն ինչ ուտում էր ու խ-կի չէր կշտանում:

Ա Ն Ո Ւ Ն Ն Ե Ր


Արմիկ, Արշակ, Նունիկ, Խորէն,
Մինաս, Խաչիկ, Անուշ, Սուրէն,
Խաչատուրն ու Աշխէնն ո՞ւր են:



Ո Ւ Ղ Մ ա ք ա ղ ա ղ

աղ	քեզ	ղէնք	քար-տաշ	քա-նոն
մաղ	քիչ	չաղ	տա-րանք	քա-մար
քաղ	մենք	տաղ	քա-ղաք	խա-ղող
քո	չենք	սաղ	կե-րանք	քա-ղսղ
քոր	չէնք	ուղտ	կու-տենք	մա-ղող

Կար-մրա-կա-տար ա-քա-ղաղ-ներ,
Ոս-կե-կա-տար կուկ-րի-կու-ներ,
Ջուտ արէք, շուտ, եկէք, կերէք,
Կուտ կերէք, կուտ, ու շուտ կորէք:



Ք ն ա ը


աւ



եւ



իւ



հաւ

տերեւ

անիւ

հա	հաւ	տերեւ	անիւ
ահ	կաւ	ե	հաշիւ
ահա	նաւ	սե ու խե	խրատիւ
համ	խաւ	Սեան	հրաւէր
հոտ	արաւ	Երեան	հրաւի-րակ

Հաւը հաւին կը հաւանի:

Հաւը տանը կենա, կուտն ուտի:

հաւ հաւ տերեւ հաւ տերեւ հաւ տերեւ

հաւ եւ հաւ հաւ տերեւ հաւ տերեւ հաւ տերեւ

տերեւ երեւան անիւ անիւ անիւ

անիւ անիւ անիւ անիւ անիւ անիւ

Աքաղաղի հրաւէրը

Աքաղաղը հարեւանի հաւին հրաւիրում է կուտի. ասում է. արի կուտ տամ, կեր: Հաւը չի հաւատում, ասում է. «Կուտ ունենաս, քո հաւերին կը տաս»:

Աքաղաղը շատ ինքնասէր էր. նա շատ նեղանում է ու կանչում է իր սուր կուկրիկուն:

—Ու—ու—ո՛ւ... ո՛ւտ ունիմ...

Կո՛ւկ—ըի—կո՛ւ... կո՛ւտ ունիմ...

Կանչում է արաղաղը հաւերին, որ կուտ ուտեն ու հարեւանի հաւը տեսնի, որ արաղաղը կուտ շատ ունի:

գ



լ

գորտ լուսին

գալ գամ գաս սագ գող գեր գէր սուգ տալ լալ սալ լաւ լալկան լուսին լրեւ լարել գըրել գըրող գըրնալ մընալ Գրիգոր Գէորդ Գալուստ Լուսիկ



Սիրուն սագիկ

Գրիգորը գնալու է Գորի:
Գալուստը գոմ է շինել:
Լուսիկը ս-րել է մ-կրատը:
Մ-կր-տիշը գրել գիտէ:



Լաւ գլուխ

Գէորգը մի նամակ է գրել Արամին:
Մինասը գնալու է Երևան:

Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ
Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ

Աշուղ Գէորգի խաղը



Գրիչ, արի, մի գիր գրեմ Գալուստին.
Մի գիր գրեմ, նամակ գրեմ Գալուստին:
Մեր Գալուստը ինքը գրել չըզիտէ,
Նա ուրիշին գրել տալը լաւ գիտէ.
Գրիչ, արի մի գիր գրեմ Գալուստին,
Մի գիր գրեմ, նամակ գրեմ Գալուստին:
Ես Գէորգն եմ, երգել գիտեմ, գիր գիտեմ,
Գրել գիտեմ, իմ խաղերն անգիր գիտեմ:
Հիմա կուզեմ մի գիր գրեմ Գալուստին:
Մի գիր գրեմ, նամակ գրեմ Գալուստին:



Ուրախ Մանուկներ

այլ սայլ այս
այն հայր մայր
Հայաստան



հայ չայ լայն
հայրենիք
Եսայի այրի

գայլ

Իմ հայրը և իմ մայրը գնալու են Հայաստան:

Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ
Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ Գ

Գայլն ու աղւեսը

Գայլն ու աղւեսը ընկերներ էին: Մէկ անգամ Աղւեսն ասում է Գայլին.

—Մերեւի Գայլիկ, ես մի հաւատան տեղ գիտեմ գեղումը, կը գնամ մի քանի չաղ հաւ կընտրեմ, կը հանեմ, միասին կուտենք:

Գայլն ասում է.


—Ես հաւի միս չեմ սիրում. ես էլ կը գնամ ոչխարի սուրուն, մի չաղ ոչխար կընտրեմ. ոչխարի միսը շատ համեղ է լինում:

Աղւեսը գնում է հաւի, իսկ գայլը—ոչխարի: Աղւեսը մի հաւ է գողանում, իսկ գայլին շները տեսնում են և հասնում ու մի լաւ զըզզըզում:



Սա է գայլի ընկեր աղւեսը


БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
СОВЕТСКОГО
КОДЕКСА
ПРЕДПРИЯТИЙ
СССР



36212-66



Նա-պառ-տակ




պոռ



կա-պիկ

պապ կապ պատ պար պաղ պոչ պինչ պարապ
պապիկ պատիւ պիտանի պէտքական պապական
պէտք պարան պարոն այսպէս այնպէս պակաս
պսակ ըսպաս պարտք պարտական Պարապետ
Պետրոս Հայրապետ Մարտիրոս



Աշխատասէր Պետրոսը

Պետրոսը ու-սում-նա-րա-նի աշակերտ էր: Նա գիշերը
գիր շատ էր գրում լամպի լուսումը: Մի գիշեր էլ ասում
է մայրը.

—Պետիկ, մատաղ, հերիք է ինչքան որ գրել ես,
էլ մի գրիւ. լամպի լուսումը երկար չեն գրիւ, աչքերի
համար լաւ չէ: Պետրոսը պատասխանում է.




Պատիկ լամպա

—Մայրիկ, բիշ էլ սպասիր, այս ըոպէիս
կաւարտեմ:

Եւ Պետրոսը նախ աւարտում է իր գրելիքը
և ապա գնում հանգստանալու:

բ



բաղ



դ

դանակ

բաղ բակ բան դա դու դաս դող
սարդ մարդ գարդ բարի բերան
բու դէզ դանակ Դերենիկ Բաղալ
Ֆարսեղ Դանիէլ Դէրբէնդ Բազ-
րատ Բաղդասար



Բ ու Լ


Դէրբէնդն ու Զուբան Դաղստա-
նումն են:

Դաղստան են ասում սարոտ
երկրին:

Դաղ—նշանակում է սար: Զա-
րաղաղ—նշանակում է Սև-սար:



Դ է Գ



Աւետիսի երգ

Մեքոն, Գասպար և Բաղդասար
Աւետիս.
Նորանըշան մի աստղ տեսան.
Աւետիս.

Երբ Բէթլէհէմ քաղաք հասան,
Աւետիս.

Մի խոր ու լայն քարայր մըտան.
Աւետիս.

Այնտեղ գլխան Սուրբ Մայրիկին,
Աւետիս.

Ամենասուրբ Մանուկ գրրկին.
Աւետիս.

Թանգ պարգևներ տուին նրբան,
Աւետիս.

Ոսկի, կընդրուկ շատ պատուական.
Աւետիս:

g   8

գանց կ ա ց ի ն

կաց լաց ցեց բաց բայց այց ցաւ ցանք ցախ
ցեխ ցամաք ցորեն ցերեկ գրեցի գրեցիր գրեց
գրեցինք գրեցիք գրեցին գնացի գնացիր գնաց
գնացինք գնացիք գնացին իմացար իմացաւ
իմացանք իմացաք իմացան Մնացական

— ց ց ա ն ւ ց . ց ու ց ա ն ւ ց . ք ա ն ւ ա ն ւ ց .
— ք ա ն ւ ց ի ն ւ ց . ք ա ն ւ ց ա ն ւ ց ա ն ւ ց .

Արմիկն ու Արշակը

— Ես մի նամակ պիտի գրեմ հայրիկիս, — ասում է Արմիկը:

— Ի՞նչպէս կըգրես, բանի որ բոլոր գրերը չըզգիտես, հարցնում է Արշակը:

— Ինչքան որ գիտեմ, այնքանն էլ կըբաւէ, պատասխանում է Արմիկը: Բացի դրանից, ինչ գիր որ չըզգիտեմ, ես կարող եմ նրա տեղ մի խաչ դնել: Գիցուք՝ պիտի գրեմ տետրակ, բայց ը գիրը չզգիտեմ, ես կըգրեմ տետրակ, կամ Մարգարիտ՝ կըգրեմ Մա+դա+խո:

— Հասկանում եմ, այդ կարելի է: 2է, դու շատ լաւ ասացիր. ես էլ էզուց իմ մայրիկիս կըգրեմ նամակ:

Լրացրէք այս բառերը

Մա+կոս. Գարե+ին. Մանու+ակ. Սարգ+ս. Մի+աս. Ծաղի+. Գիրա+ոս. Մկը+իչ. վարդապ++. առաջն+ + + . եպիսկո+ + + . եկեղ+ + + . Գարա+ + + . Մարգ+ + + + :




կ ո Վ վ ա ր դ

ով կով սով հով գով վար վատ վաղ վիշ վուշ
վիշտ վաշտ վարա վարք վանք վազը վազել
վարել տարով բարով սարով քարով տանով
տեղով գրով գրելով կարդալով գնալով գալով

Վան Վահան Վարդան Վարդուհի Վաղինակ
Վարսենիկ Վաղարշապատ վարդապետ վանահայր
վանքական վեղար վեղարաւոր

- Վահագը վանքի վարպետն է:
- Վաղինակը գնացել է Վրաստան:
- Վարդանն ու Վասակը իրար բարեկամ չեն:



Վ ո վ ի մ ա ս ի ն

—Վահան, դու ի՞նչ կասես, կոյն ինչ է տալիս:

- Կաթ:
- Ասա—Կովը տալիս է կաթ:
- Կովը կաթ է տալիս:
- Չատ լաւ, կովը կաթ է տալիս: Ես կաթը կը գրեմ դասատան գրատախտակի վրա ու դուք կը տեսնէք, որ մենք մի նոր գիր գրտանք, որ է թ.

—Ուրիշ ի՞նչ կարող էք ասել, որ նրանում այս գիրը լինի: Ես կասեմ ահա մի քանիսը—
թաթ, թութ, մութ, թել, թիզ: Հիմա դուք ասացէք:

— Հիմա ուրիշ բան պիտի հարցնեմ: Կաթը որ մերում են, դրանով ի՞նչ են շինում.

—Մածուն:

Ուղիղ է. մածուն: Հիմա ես կը գրեմ մածուն, դուք կը տեսնէք, որ էլի մի նոր գիր գրտանք, որ է ծ: Եկող երկու դասին մենք այդ երկու գիրը կը սովորենք:

կ ո վ ի կ




Ժ ա ո

Ծ ի ծ ե ո ն ա կ ն ե ր

առ տառ ծառ առած ծրուած ծրու-մը-ռած
ասած սառած մեռած ծիծեռնակ բառ բառով
տառով աստառ բարբառ մառան դառնալ պայ-
ծառ կայծակ կուռը գուռը նուռը ծուռը խառը
գառը սառը ամառը ռամիկ Ռոստոմ Ծատուր

Աստ-ւած Աստ-ւա-ծա-տուր:



Տ ա ո ա խ ա գ

Ասատուրը մի լաւ տառախաղ գիտէ: Տեսէք ահա ինչ է անում: Բառի տառերը ցրում է, այսինքն՝ գրում է ցրիւ, գտնողը պիտի գտնի՝ ինչ բառի տառեր են և կազմի այն բառը: Դիցուք՝ մեր ունեցած բառն է—մատիտ: Մենք զրա տառերը կը գրենք ցրիւ, այսպէս ահա

ա—ի—տ—տ—մ

գտնողը շուտ չի գտնիլ, նա կասէ—տիտմա, տամտի, տատմի, միտատ, մինչև կը գտնի մատիտ և կը տեսնի որ ուղիղը այդ է: Տառախաղում ցրիւ գրած բառը ասում է «տառական խնդիր»:

Ահա այս տեսակ հեշտ գտնելու խնդիրներ

ու—ա—տ—կ
ը—ու—կ—մ
ա—ա—ը—կ—ս
Ա—ա—կ—շ—ը

ա—ա—ա—դ—տ—ն—լ
Ա—տ—ը—ու—ս—ա
ի—ա—ծ—ն—ը—ի
ի—ե—ա—ծ—ծ—ն—կ—ն



թ ի թ ե ո

թաթ թութ թուր ութ կաթ թրուչուն երկու-
շաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի,
ուրբաթ, շաբաթ, կիրակի:

Թիթեռի թևերը շատ բարակ են լինում:
Թամարը երկու կըթոց թուզ է բերել:
Թամարի հայրը գնացել է Թաւրիզ:
Թումասի տանը շատ թուրքեր կան:

թ թ թ թ ե ո թ ա թ թ ա թ թ

թ ա մ ա թ թ ո մ ա ա թ ո ա գ ո ս

Գ ա ո ն ու կ

Մի լար, գտնուկ սիրական,
Պրատիկ տրդի դու նրման.
Կըգայ մայրըդ, հետը շատ
Կը բերէ քեզ անուշ կաթ:

շ—մ—մ—ա—ա
Մ—ն—ս—ի—ա
Մ—կ—ը—ա—ա
Ղ—գ—ը—ա—ա

Չ ու շ ա ն


Իմ սպիտակ թերթերում
Մեզու, բզեզ և թիթեռ
Կարող են հանգիստ գտնել
Իբրև ազնիւ գեոուններ:

կ—կ—պ—ի—ա
Չ—շ—ն—ու—ա
թ—մ—ը—ա—ա
թ—մ—ս—ա—ո

Կ ո ո ն կ ն ե ը

Կը՛ն, կը՛ն, կըռ-կըռան,
Կըռունկները հա թըռան,
Կըռունկների թևի տակ
Եկաւ ամառ մեր զրոան:

ու—կ—կ—ն—ն
ա—ու—գ—ո—ն—կ
ի—ե—թ—թ—ո
մ—ու—դ—ե



առիւծ

ա կ ի ւ ո

Իւր իւզ գիւզ շիւզ բիւրեղ Կիւրեղ աղբիւր
միւս հիւս հիւսիս արիւն հարիւր ծերութիւն
գերութիւն գիտութիւն ծուլութիւն պատմութիւն
տէրութիւն պետութիւն գրութիւն

ա	ա	լ	ն	ս
ա	ի	ր	ծ	ւ
ու	թ	ն	ու	շ
ա	ա	ն	գ	դ

Արծիւր թռչուն է,
Առիւծը գազան,
Արծիւր դուզողունն է,
Առիւծն է ասլան:

Առիւծ. իւզ. իւր. թիւն.
Կարիւր. աղբիւր. գիւզ.

Արշակի նամակը

Միբիւն մայրիկ.
Ես հիմա գիտեմ գրել ու կարդալ: Տես անա նամակ
եմ գրում քեզ, որ կարդաս և ուրախանաս: Ես գեռ բոլոր

գրերը չըզիտեմ: Երբ որ բոլորը սովորեմ, աւելի շուտ
շուտ կը գրեմ: Հիմա այսքանս բաւական է:

Հայրիկիս ասա որ գրելու տետրակներ շատ առնէ:
Մեզանում շատ են գրել տալիս, շարունակ գրում ենք ու
գրում: Առաջ մեր գրածն ենք կարդում և ապա տպածը:
Յրտեսութիւն, մայրիկ:
Քո Արշակ:



Եղջերու



Չութակ

Ջ
Ղ

Չորի

Չուր Չիլ աջ էջ մէջ ունջ մունջ Չանք քաջ եղինջ
ականջ Չրկիր Չաղաց Ջաւահիր

Ա ո ա ծ ն ե ր

Արիւնն արնով չեն լրանալ, արիւնը Չրով
կըլրանան: Ջուրն իր գնացած տեղովը կերթայ:
Մի աման Չուր, ով ուզի՝ տուր: Ջաղացն իր
ասածը կանի, չանչախի գլուխը կըցաւի:

Չ գ եղ գ եր ու զ ու բ ա կ գ ա յ ի
Ջ աւ ա հ ի ր զ ի ա յ գ ի ր զ ի յ ա գ

Ընկերասէր եղջերուներ



Մի ծաղկաւէտ և խոտառատ սարի վրա արածում էին երկու եղջերու: Նրանցից մէկը մի բանի խոտ ու ծաղիկ պոկեց և միւսին տրւաւ՝ ասելով.

— Ընդունիր, եղբայր, այս խոտը, թէև սա ոչ մէկիս պակաս չէ:

— Զատ և շատ շնորհակալ եմ, պատասխանեց միւսը, ինչո՞ւ չըշահենք մէկ մէկու սիրտ, թէկուզ մեզ անպակաս սարի առատ խոտով:

Մ




Փ

Մ Ի Պ

Վայտ վայլ փող թուփ քամի վակ տափ չափ ծափ լափ ափ փափա փափախ փառք փափազ

Փրղին ասում են փիլ: Փիղը շատ փառահեղ կենդանի է: Փղերը լինում են և ընտանի և վայրենի: Վայրենի փղերը շատ կատաղի են լինում, երբ որ բարկանում են:

Փարսազանը փղոսկրի առուտուր ունի:




Կատու

Կատուն եկաւ, փիսիկ, փիսիկ,
Հագար նագով, ինչպէս հարսիկ.
Դունչը սրբեց թաթիկներով,
Մազը սանդրեց շանչիկներով.
Կատու, կատու, է՞ր ես տրտում.
Թէ՞ մկներն են հիմա արթուն:
Կատուն ասեց — միայո՞, միայո՞.
Այսինքն թէ՛ — այո՞, այո՞:

Մանուշակ

Կապոյտ զլխով, կանաչ ոտով
Ես ծաղիկ եմ անուշ հոտով.
Թէև տունկս փոքրիկ է, ցած,
Արօտներում միշտ թաք կացած,
Բայց իմ փունջս ամենի տան,
Թէ աղքատի, թէ մեծատան,
Իբրև զարնան առաջին զարդ,
Կարէ տեսնել ամեն մի մարդ:
Ես եմ սիրուն զարնան զուշակ,
Իմ անունըս է մանուշակ:

ոյ




ժ



բոյն բաժակ

ժամ կուժ ուժ ուժեղ ուժով այժմ բաժակ ժամ ժամանակ արժանի ժողով ժողովուրդ ցոյց ուղեցոյց օրացոյց տօնացոյց բոյն թոյն սոյն դոյն նոյն գոյն գոյն-ըգ-գոյն բոյս լոյս կոյս կապոյտ քոյր հօրաքոյր մօրաքոյր




ժամացոյց

Իմ ժամացոյցս շատ ուղիղ է բանում: Ժամացոյցն ունի երկու սլաք, մէկը ցոյց է տալիս ըօպէն, իսկ միւսը՝ ժամը: Ժամ ցոյց տըւող սլաքը փոքր է, իսկ ըօպէն ցոյց տըւողը — մեծ:

բոյս կոյս լոյս գոյն
քոյր կոյր եւամբոյր սոյն

ԾԻՏԸ ԵՒ ԲԱՉԻՆ

Ծիտը ծառին ծըլըլում է.
ծի՛ւ, ծի՛ւ, ծի՛ւ...
Բաղէն գլխին սըտըտում է.
Վճւյ, վճւյ, վճւյ...
Ծիտը լըւեց, ծիտը վախեց.
Վա՛յ, վա՛յ, վա՛յ...
Բաղէ, թը՛ռռ, բաղէ, թը՛ռռ...
Հա՛յ, հա՛յ, հա՛յ...
Բաղէն թըռա՛ւ, բաղէն փախա՛ւ,
Ինչ լաւ էլաւ, հէ՛, հէ՛, հէ՛...



ճանճ մուրճ

ճանճ ճանգ կարճ ճրագ ճիտ ճիճու արճիճ
ճախարակ ճարտար անճար հանճար ճառագայթ
ճեմարան ճըշմարիտ ճահիճ ճըզնաւոր
Ճրագն իր տակին լոյս չի տալ:
Պտղատու ծառը ճղները կախ կըզըցի:



ճա՛նճ. արճի՛ն. երայրու.
ե՛րեւո. ճա՛նճա՛ն. ե՛րբի՛ն.




Ճ ա խ ա ր ա կ ի ե ր գ

Մանիր, մանիր, իմ ճախարակ,
 Մանիր սիպտակ մալանջներ,
 Մանիր թելեր հաստ ու բարակ,
 Որ ես հոգամ իմ ցաւեր:
 Զէթ եմ ածել ականջներդ,
 Նոր շինել եմ շրտաբլիկ,
 Դէհ շուտ շարժիր լայն թներդ,
 Ուտեր շինիր, սըրուլիկ:
 Տիգրանիկս գուլբա շունի,
 Հանդ է գրնում ոտարաց,
 Գարբիէլբա շուխա շունի,
 Միշա անում է սուգ ու լաց:
 Զրալ շունինք, չաթու շունինք,
 Ոչ սամոտէն, ոչ պարան,
 Այսպէս աղքատ զեռ եղամ չենք,
 Կրտրբել է ամեն բան:

Դեռ հարս էի, որ գործեցի
 Քանի կարպէտ խալիշա,
 Բայց դրանցից շուտ զրկեցի,
 Հիմա շունիմ մի քեշա:
 Կարմիր օրբս երբ սեացաւ
 Եւ պարտք մընաց, թէն քիշ,
 Պարտատիրոջ սիրտն էլ սեցաւ,
 Եկաւ տարաւ ամեն ինչ:
 Մանիր, մանիր, իմ ճախարակ,
 Մանիր սիպտակ մալանջներ,
 Մանիր թելեր հաստ ու բարակ,
 Որ ես հոգամ իմ ցաւեր:



ձ ու կ




օ ր օ ր ո ց



Ձ ի

օձ օր օղ օղ ձոր ձագ ձայն
 ձող ցող ձին ձեղ ձեռք ձէթ
 ձմեռ ձմերուկ տանձ խնձոր



զանձ սանձ

Օ ձ

Ա ռ ա ծ ն ե ր

Անձրև օրը հաւերին ջուր տրւող շատ կըլինի:
 Մի ծաղկից օձը թոյն է շինու՛մ, մեղուն—մեղր:
 Օձի գլուխը որ ցաւի, կըտանի ճանպու՛մը կըղնի:
 Օձն առաջ իր տաքացնողին կըկծի:
 Խօսքը մերը, տունը՝ մերը:
 Մի ձեռքով երկու ձմերուկ չես բռնիլ:
 Ասուած սարը կըտեսնի, ձիւնը կըղնի:

օջ. հաւկր. օջիխ. Օջու՛ն.
օրապոչոյ. օրեցօր. Զորապետ.

Վիճակի երգ

Սարի տակը քարոտ է,
 Պարնի ձիանց արօտ է,
 Ահա օխտը տարի է,
 Քոյրը եղբօր կարօտ է:

Ն ո ր տ ա ր ու ե ր գ

Մանկական մաղթանք

Արի գու, արի, քո գալը բարի,
 Միրուն նոր տարի, նոր օրեր բեր մեզ.
 Զիւն տուր սարերին, անձրև՝ արտերին.
 Կարկուտը չարին, գով արևը՝ մեզ.

Անթուփ ծաղիկից, աններկ կարմրուկից,
 Բարի ցաւերից ազատ պահիր մեզ:
 Մայրական գթով, գրկաբաց ձեռքով,
 Ուրախ ժպիտով ա՛ռ քո գիրկը մեզ:

1 2 3 4 5 6 7 8 9 10
 մէկ երկու երեք չորս հինգ վեց եօթը ութ իններ տասը

7

Ե օ թ ր

Եօթը տասնըեօթը քսանըեօթը եօթանասուն
 արդեօք կարծեօք եօնջա եօրդա գեօլ

եօթը. եօթդա. եօնջա. արդեօք.
կարծեօք. բնաբանեօք.

Ե ա

բարութեան չարութեան հետևեալ ստորադրեալ
 ստորազրեալ պաշտօնեայ քրիստոնեայ միմեանց
 լուսնեակ որդեակ հոգեակ Եաղուրեան Գեանջե-
 ցեանց Եսայեանց Կարապետեան

Որդեակ, լսիր հօրըդ խրատը:—Արմիկ, հո-
 գեակս, չարութիւն մի անիր:—Երեխէք, մի
 կըուէք միմեանց հետ:



Փայլտուն

Փուրղօն ֆելիեոն Փրանսիա Աֆրիկա

*Փաեպոն. ֆուրղօն. ֆեա.
Ֆեֆ. կա՛ն ֆեհպ. Ֆրանսիա.*

յ հնչում է ինչպէս հ

յոյս յոյն յարդ յարդ յարկ յիշատակ յիշել յանկարծ
յայտնի յատակ Յիսուս Յակօբ Յովսէփ Յարութիւն
յունւար յունիս յուլիս յիսուն յաճախ յաջորդ յօժար

յ անձայն

Տղայ երեխայ ընծայ հսկայ արքայ ճանապայ օրւայ
տարւայ վրայ արեղայ առօրեայ: (նա) դայ տայ լայ
կայ զնայ մնայ աղայ կարդայ իմանայ մոռանայ:
(ես) եկայ իմացայ մոռացայ ուշացայ ուրախացայ

Կիսաձայնաւոր

հայ վայ չայ փայ նոյ հայր մայր վայր ծայր
գայլ սայլ փայլ այլ բայց այծ լոյս բոյս կոյս քոյր

Վերացած

սա դա նա սրա զրա նրա ահա հիմա (դու) ասն
աղն արն կարդն ինդն զնն մնն (օտար բառեր և
յատուկ անուններ) խաթա բալա մաշա բօշա ուստա
Յուդա Երեմիա Իտալիա Ասիա Աֆրիկա Ամերիկա...

Այբուբեն սովորական կարգով

ա բ գ դ ե զ է ը թ ժ ի լ խ ծ կ հ ձ ղ ճ
մ յ ն շ ո չ պ ջ ռ ս վ տ ր ց ռ փ ք ե օ ֆ

Ա Բ Գ Դ Ե Զ Է Ը Թ Ժ Ի Լ Խ Ծ Կ Հ Ձ Ղ
Ճ Մ Յ Ն Շ Ո Չ Պ Ջ Ռ Ս Վ Տ Ր Յ Ի Փ Ք Օ Ֆ

*ա բ գ դ ե զ է ը թ ժ ի
ի խ ծ կ հ ձ ղ ճ մ յ ն
շ ո չ պ ջ ռ ս վ տ ր ց
ը փ ք ե օ ֆ Մ Կ Մ
և բ գ դ ե զ է ը թ ժ
ի յ յ խ ծ կ ե ձ ղ ճ մ
ն ո չ ղ պ ջ ռ ս
վ տ ր ց ի փ ք Օ ֆ
1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12*





Ա Ք Ա Ղ Ա Ղ.

Աքաղաղը կանչում է—

Ծուղրուղո՞ւ... դու—դու—դու...

Պառաւ նանը դարձնում է...

Տատատա՛... պա—պա—պա...

Աքլար, ինչո՞ւ կանչեցիր,

Ինչո՞ւ նանին դարձեցրիր,

Ախ դու—դու, այ ջու—ջու...

Ախ նանի, ջան նանի,

Մեզ մի վեր կացընի.

Թող մի քիչ էլ մընանք,

Քնից լաւ կշտանանք.

Աքլարը շուտ է կանչում,

Աքլարը չի ամաչում:

Ախ արլար, վայ արլար,

Գու աղւէսի վայ արլար,

Ինչո՞ւ վաղ—վաղ կանչեցիր,

Ինչո՞ւ նանին դարձեցրիր,

Ախ դու—դու, այ ջու—ջու...

Ժամից բարձր, քնից քաղցր ոչինչ չըկայ—
—Երեխի համար:



ԽԵՆԿՅԱՆ ԳԼՈՒԽԸ

Բերանն ասեց.—Ես ամեն ինչ կուտամ կըխամ:

Գլուխն ասեց.—Հը՛մ...

Լեզուն ասեց.—Ես ինչ ուզենամ, կասեմ, կըխօսեմ:

Գլուխն ասեց.—Հը՛մ...

Ձեռներն ասեցին.—Մենք ամեն ինչ կըշինենք, կը-
բանդենք:

Գլուխն ասեց.—Հը՛մ...

Ոտներն ասեցին.—Մենք ամեն տեղ կերթանք, ման
կըզանք:

Գլուխն ասեց.—Հը՛մ...

Բերանն ու լեզուն, ձեռներն ու ոտները ասեցին
զլխին.

—Ինչո՞ւ ես «Հը՛մ» անում:

Գլուխը պատասխանեց.—Ինչ անէք—չանէք, առաջ
ինձ պիտի հարցնէք:

Ոտներն ու ձեռները կուչ եկան, բերանը մնաց բաց,
իսկ լեզուն կակազելով ասեց.

— Հա՛... ըզըզորդ է ասում գըզըլուլուխը...

Ոտքով ման եմ գալիս, ձեռքով աշխատում,

Աչքովըս տեսնում եմ, ախանջով լսում.

Իսկ իմ շարն ու բարին, իմ լաւն ու վատը

Ո՞վ է իմանում.

-- Խելօք զլուխս:

ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՏԻՂԻ

Արե, արե, եկ, եկ

Նախշուն քարին վէր եկ

Նախշուն քարին տիտիկ* արա
Մեր ոչխարին մտիկ արա,
Իսկ գառներին ճիտիկ* արա,
Որ գայլը գայ՝ տուտիկ* արա:

ՄԱՆԿԱԿԱՆ ԽՆԳԻՐՔ

Արև, արև եկ եկ,
Զիզի քարին վէր եկ:
Սև—սև ամպեր հեռացէք,
Արևին ճանպարտէք.
Թողէք դա գայ մեզ մօտ,
Դրա լոյսին ենք կարօտ:
Կարմիր արև, եկ եկ,
Նախշուն քարին վէր եկ:

Արևը յաղթեց ամպերին,
Չողքը ձրգեց սարերին,
Զիզի քարը, տես—տես,
Պսպրղումէ ոսկու պէս:
Միրուն արև, միշտ եկ,
Զիզի քարին վէր եկ.

ՄՐՋԻՆՆ ՈՒ ԼՈՒՆ.

Մրջինն ու լուն եղբայրացան և միասին գնացին
գաշտ գրօնելու: Այդտեղ նրանք դէմ առան մի առւի:



Լուն ասեց.—Ես մի ոստի-
նով կարող եմ թռչել առւի
միւս կողմը, իսկ դու ինչ
կանես:

—Ես էլ կարող եմ ցատ-
կել, ասեց Մրջինը:

Լուն կուչ եկաւ, բոլոր ուժը հաւաքեց ու յանկարծ

* Մանկական բառեր են.—տիտիկ արա=նստիր: ճիտիկ արա
=գրգւիբ: Տուտիկ արա=ծեծիր:

Թուաւ առւի միւս կողմը: Մրջինը նոյնպէս բոլոր ուժը
հաւաքեց, ցատկեց ու ընկաւ առուն: Նրա բախտիցը ջրի
մէջ մի թուփ խոտ կար բըսած, ընկաւ խոտի վրայ և
խեղդւելուց ազատեց, բայց տեսաւ որ չը պիտի կարո-
ղանայ ցատկել միւս կողմը, կանչեց Լու եղբօրը և ասեց.

—Միրելի եղբայր, ջուրը կրմեծանայ ու ինձ կը խեղ-
դի, մի ճար արա, այս փորձանքիցն ինձ ազատիր:

Լուն թռչկոտելով հասաւ խոզին ու ասեց.



Խոզիկ—խոզիկ, մազիկ
տուր, մազից շինեմ մի
պարան, պարանը գցեմ ա-
ռուն, Մրջին եղբօրս ա-
զատեմ:

Խոզը պատասխանեց.—Եթէ ինձ համար կաղին կը-
բերես...

Լուն թռչկոտելով հասաւ կաղնի ծառին ու ասեց.



Կաղնի—կաղնի, կաղին
տուր, կաղինը տամ խոզիկին,
խոզիկն ինձի մազիկ տայ,
մազից շինեմ մի պարան,
պարանը գցեմ առուն, Մր-
ջին եղբօրս ազատեմ:

Կաղնին պատասխանեց.—Եթէ ագռաւին իմ վրայից
կը քշես... Լուն թռչկոտելով ագռաւին հասաւ և ասեց.



Ագռաւ—ագռաւ կաղնուն
թող, կաղնին ինձի կաղին
տայ, կաղինը տամ խոզիկին,
խոզիկն ինձի մազիկ տայ,
մազից շինեմ մի պարան,
պարանը գրցեմ առուն,
Մրջին եղբօրս ազատեմ:

Ագռաւը պատասխանեց.—Եթէ ինձ համար հաւի ձա-
գիկ կը բերես... Լուն թռչկոտելով հասաւ հաւին և ասեց.



Հաւիկ—հաւիկ, ձագիկ տուր, ձագիկը տամ ազոաւին, ազոաւը քաշւի կաղնուց, կաղնին ինձի կաղին տայ, կաղինը տամ խոզիկին, խոզիկն ինձի մագիկ տայ, մագից

շինեմ մի պարան, պարանը զըցեմ առուն, Մըջին եզբօրս ազատեմ:

Հաւը պատասխանեց.—Եթէ ինձ համար կուտ կըբերես... Լուն թռչկոտելով հասաւ ցորնահորի մօտ և ասեց.



Հորիկ—հորիկ, կուտիկ տուր, Կուտիկ տանեմ հաւին տամ, Հաւիկն ինձի ձագիկ տայ, Ձագիկը տամ ազոաւին, Ազոաւը քաշւի կաղնուց,

կաղնին ինձի կաղին տայ, կաղինը տամ խոզիկին, խոզիկն ինձի մագիկ տայ, մագից շինեմ մի պարան, պարանը զըցեմ առուն, Մըջին եզբօրս ազատեմ:


Հորը պատասխանեց.—Եթէ մուկն ինձանից կը հեռացնես... Լուն թռչկոտելով հասաւ մկանը և ասեց.



Մուկիկ, հորին մի դիպչիր, Որ հորիկն ինձ կուտիկ տայ, Կուտը տանեմ հաւին տամ, Հաւիկն ինձի ձագիկ տայ, Ձագիկը տամ ազոաւին, ազ-

ոաւը քաշւի կաղնուց, կաղնին ինձի կաղին տայ, կաղինը տամ խոզիկին, խոզիկն ինձի մագիկ տայ, մագից շինեմ մի պարան, պարանը զըցեմ առուն, Մըջին եզբօրս ազատեմ:


Մուկը պատասխանեց.—Եթէ ինձ կատուից կազատես... Լուն թռչկոտելով հասաւ կատուին և ասեց.



Կատուիկ—կատուիկ, թող մուկին, մուկը քաշւի հօրիցը, որ հորիկն ինձ կուտիկ տայ, կուտը տանեմ հաւին տամ, հաւիկն ինձի ձագիկ տայ, ձագիկը տամ ազոաւին, ազոաւը քաշւի

կաղնուց, կաղնին ինձի կաղին տայ, կաղինը տամ խոզիկին, խոզիկն ինձի մագիկ տայ, մագից շինեմ մի պարան, պարանը զըցեմ առուն, Մըջին եզբօրս ազատեմ:

Կատուն պատասխանեց.—Եթէ ինձ համար կաթ կըբերես... Լուն թռչկոտելով հասաւ կովին և ասեց.



Կովիկ, կովիկ, կաթիկ տուր, Կաթը տանեմ կատուին տամ, Կատուն մուկին չը դիպչի, Մուկը քաշւի հօրիցը, Որ հորիկն ինձ կուտիկ տայ, Կուտը տանեմ հաւին տամ,

հաւիկն ինձի ձագիկ տայ, ձագիկը տամ ազոաւին, ազոաւը քաշւի կաղնուց, կաղնին ինձի կաղին տայ, կաղինը տամ խոզիկին, խոզիկն ինձի մագիկ տայ, մագից շինեմ մի պարան, պարանը զըցեմ առուն, Մըջին եզբօրս ազատեմ:

Կովը պատասխանեց.—Եթէ ինձ համար խոտ կըբերես... Լուն գնաց դաշտիցը մի խորոմ խոտ քաղեց բերաւ կովին տըլաւ:



Կովը նրան կաթ տըլաւ, կաթը տըլաւ կատուիկին, կատուն հաշտեց մկան հետ, մուկը հորին չը դիպաւ, հորը լըւին կուտ տըլաւ, կուտը տարաւ հա-

ւիկին, հաւը նրան ձագ տըլաւ, ձագը տարաւ ազոաւին,

ագուաւր թողեց կաղնուն, կաղնին էլ կաղին տըւաւ, կաղինը խոզին տըւաւ, խոզը մագ տըւաւ, մագիցը պարսն շինեց, տարաւ առուն գրցեց, մըջին եղբօրն ազատեց:



ԲԱՐԵՎԵՆԳԱՆԻ ԵՐԳ.

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է կերել այգին.

Գնացին, տեսան՝ այծն է կերել այգին:

Այծն ու այգին .

Ձեզ բարի—կենդան, մեզ բարի գատիկ:

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է կերել այծը.

Գնացին տեսան՝ գայլն է կերել այծը:

Գայլն ու այծը, այծն ու այգին.

Ձեզ բարի—կենդան, մեզ բարի գատիկ:

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է կերել գայլը.

Գնացին, տեսան՝ սուրն է կերել գայլը:

Սուրն ու գայլը, գայլն ու այծը,

Այծն ու այգին.

Ձեզ բարի—կենդան մեզ բարի գատիկ:

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է կերել սուրը,

Գնացին, տեսան՝ ժանգն է կերել սուրը:

Ժանգն ու սուրը, սուրն ու գայլը,

Գայլն ու այծը, այծն ու այգին,

Ձեզ բարի—կենդան, մեզ բարի գատիկ:

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է կերել ժանգը.

Գնացին, տեսան՝ իւղն է կերել ժանգը:

Իւղն ու ժանգը, ժանգն ու սուրը,

Սուրն ու գայլը, գայլն ու այծը,
Այծն ու այգին.

Ձեզ բարի—կենդան, մեզ բարի գատիկ:

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է կերել իւղը.

Գնացին, տեսան՝ մուկն է կերել իւղը:

Մուկն ու իւղը, իւղն ու ժանգը,

Ժանգն ու սուրը, սուրն ու գայլը,

Գայլն ու այծը, այծն ու այգին.

Ձեզ բարի—կենդան, մեզ բարի գատիկ:

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է կերել մուկը.

Գնացին, տեսան՝ կատուն է կերել մուկը:

Կատուն ու մուկը, մուկն ու իւղը,

Իւղն ու ժանգը, ժանգն ու սուրը,

Սուրն ու գայլը, գայլն ու այծը,

Այծն ու այգին.

Ձեզ բարի—կենդան, մեզ բարի գատիկ:

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է տարել կատուն.

Գնացին, տեսան՝ հարսն է տարել կատուն:

Հարսն ու կատուն, կատուն ու մուկը,

Մուկն ու իւղը, իւղն ու ժանգը,

Ժանգն ու սուրը, սուրն ու գայլը,

Գայլն ու այծը, այծն ու այգին,

Ձեզ բարի—կենդան, մեզ բարի գատիկ:

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է տարել հարսը.

Գնացին, տեսան՝ փեսան է տարել հարսը:

Փեսան ու հարսը, հարսն ու կատուն,

Կատուն ու մուկը, մուկն ու իւղը,

Իւղն ու ժանգը, ժանգն ու սուրը,

Սուրն ու գայլը, գայլն ու այծը,

Այծն ու այգին.

Ձեզ բարի—կենդան, մեզ բարի գատիկ:

Գնացէք, տեսէք՝ ո՞վ է տարել փեսան.

Գնացին, տեսան՝ Տէրն է տարել փեսան:

Տէրն ու փեսան, փեսան ու հարսը,

Հարսն ու կատուն, կատուն ու մուկը,

Մուկն ու իւղը, իւղն ու ժանգը,
 ժանգն ու սուրը, սուրն ու դայլը,
 Գայլն ու այծը, այծն ու այգին.
 Չեզ բարի—կենդան, մեզ բարի գատիկ:



Հ Ա Ն Ե Լ Ո Ւ Կ

Օհանն ու Վանին հանելուկներ էին առաջարկում մի-մեանց: Հեշտ հանելուկները երկուսն էլ գտնում էին, իսկ գժւարի համար, որ չէին կարողանում գտնել, զանազան բաղաճներ էին ընծայում առաջարկողին, որ նա բանայ հանելուկը: Ահա օրինակ:

—Վանի, արա ասա. այն ինչն է, որ դուրսն արծաթ է, մէջը ոսկի:

—Գիտեմ, այդ ձուն է, որ դուրսը սպիտակ է, ներսը դեղին: Հիմա ես հարցնեմ:

«Անշուր ջաղաց, անկրակ բաղարջ». այս ինչն է:

—Այդ մեղրահացն է: Դէ հիմա ես հարցնեմ:

—Այն ինչն է ինչ՝—ճակը քար է, քար չէ, վրան քար է, քար չէ, խոտ կուտի, կով չէ, ձու կածի, հաւ չէ...

—Սպասիր մտածեմ: Ինչպէս թէ «վրան քար է», այդ ես լաւ չեմ հասկանում:

—Ի՞նչ կայ այդտեղ չը հասկանալու: Վերև ու ներքև, կամ տակն ու գլուխը, կամ փորն ու քամակը քար է, բայց քար չէ:

—Յետոյ, համ խոտ է ուտում, համ էլ ձու ածում:

—Այո, այո... էլ մի երկարացնիլ, կամ թէ չէ, մի լաւ բաղար տուր, ասեմ:

—Չատ լաւ, Երևանը քեզ:

—Երևանը շոր է, չեմ ուզում:

—Ալէքսանդրապօլ. Նուխի. Չամախի. Բարս. Գուրս:

—Չեմ ուզում, չեմ ուզում, չեմ ուզում...

—Հապա սրն ես ուզում.

—Թիֆլիսը:

—Օհ, ի՞նչ ախորժակ ունիս... Թիֆլիսը չեմ տալ:

—Իմ ուղածը Թիֆլիսն է. չես տալ, ես էլ չեմ ասիլ:

—Այդ ի՞նչ հանելուկ է, որ ես դրա համար Թիֆլիսը քեզ տամ, կարծէ արդեօք: Դէ լաւ, քեզ լինի:

—Դէ լսիր առաջ: Ուտեմ, խմեմ Թիֆլիս. հազնեմ, մաշեմ Թիֆլիս. ես մի քահլան ձի նստեմ, դու մի լըղըիկ ջորի, ես ուտեմ մածուն ու կաթ, սերն երեսին, իսկ դու...

—Դէ, բաւական է, ասա, եթէ ոչ՝ Թիֆլիսը յետ կը-խըլեմ:

—Կրիան է, կրիան: Այն որ կանգնում ենք վրան, որ մեզ տանի պապոնց տուն, և ասում ենք. «Կօրա, կօրա, պապոնց տուն»...

—Դու էլ բան ասեցիր... Պապոնցս տունը ես վազելով եմ գնում և ոչ թէ կրիայի քայլերով: Բայց ճիշտ է, որ նա քարի պէս պինդ պատեան ունի, ու համ խոտ է ուտում, համ էլ ձու է ածում: Բայց Թիֆլիսը շատ է դրա համար, դու թանգ ծախեցիր ..



Օհանի կրիան է:



Բ Ա Դ

Բազիկ—բազիկ, կարմիր թաթիկ,
 Ո՛ւր ես գնում կամաց—կամաց,
 Չագուկներդ չորս կողմդ առած.
 —Ես գնում եմ ջուր գտնելու,
 Չագուկներըս լրանալու.
 Չագուկներըս մարուր—մարուր,
 Իսկ վատ տղայքն են աղտ ու մուր:



Ս Ա Գ

Սագիկ—մագիկ, իմ սիրունիկ,
 Ես քեզ կըտամ քաղցը կուտիկ,
 Որ դու ուտես, շուտ մեծանաս,
 Ուրախ ապրես, զըւարճանաս.
 Երբ մեծանաս, մեծ սագ դառնաս,
 Ես կը ինդրեմ իմ մայրիկիս,
 Որ նա ժողէ բո փետուրներ
 Եւ ինձ համար շինէ բարձեր:

ՄՐՏԱՅԵՒ ԱՂՋԻԿ

Մի փոքրիկ աղջկայ մայր հիւանդացել էր և բժիշկը
 մի դառը դեղ էր տրել խմելու: Աղջիկը տեսնում է, որ
 մայրը զըգելով է խմում դեղը, ասում է.

—Մայրիկ, թող ես խմեմ քո փոխարէն:

ՀԻՆԳ ԶԳԱՅԵՐԸՆԻ

Ես աչքով տեսնում եմ, ականջով լսում, քթով հոտ
 եմ առնում, լեզուով ճաշակում. իսկ ցուրտն ու տաքը,
 կոշտն ու կակուղը ինչո՞վ եմ զգում.

—Բոլոր մարմնովս եմ շօշափում:

Ա Ռ Ա Ի Օ Տ

Արեգակը դուրս է եկել պսալդալով,
 Ըողքը հերթից ներս է ընկել շողշողալով.
 Ծիտը ծառին կըշկըշում է ծըլըլալով,
 Չորումն առուն քըշքըշում է վըշվըշալով.
 Ծոյլ տղայի քունն է տարել խոըմփալով,
 Կօշիկները շունն է տարել մըումըռալով:



ԱՂՔԱՏԱՍԷՐ ԶՈՒՆԸ

Զունը պահպանում էր իր տիրոջ տունը: Նա տեսաւ մի մուրացկան բակումը կանգնած, սկսեց վրան հաշել:

—Սիրելիս, ասեց աղքատը, բարի եղիր և խղճանք ինձ, անա երկու օր է ոչինչ չեմ կերել:

—Ես էլ նրա համար եմ հաշում, որ տանեցիք լսեն ձայնս և քեզ բաժին բերեն,—ասեց շունը:

—Եթէ այդպէս է, խնդրեմ ընէխըդ դէպի տունը դարձնես և այնպէս հաշես,—ասեց աղքատը, որ տնապահ շան աղքատասիրութեանը չէր հաւատում:

ԹԻԹԵՌԸ ԵՒ ՄԱՆՈՒԿԸ

Մ Ա Ն Ո Ւ Կ

Սիրուն թիթեռ, ինձ ասա,
Թէ ինչո՞վ ես դու ապրում:

Ամբողջ օրը խաղում ես,
Ինչպէս է որ չես յոգնում:

Թ Ի Թ Ե Ռ

Սիրուն կանաչ դաշտերում,
Ես ապրում եմ համարձակ,
Ծաղիկների հոտն անուշ
Իմ կերակուրս է միակ:

Բայց իմ կեանքը շատ կարճ է,
Հաւասար է մի օրի,
Հէնց որ անցնի ցերեկը,
Իմ արևն էլ կը մարի:



ԳԻՒՂՆԱԶ ՏԱՏԻ ՀԷՔԻԱԹԸ

Զմեռն էր, գիշերը երկար: Գիւլնազ տատը
զլուխը բարձի վրա դրած՝ ննջում էր: Երե-
խէքը վրա թափւեցին, քունը փախցրին, որ
իրանց համար մի հէքիաթ ասի. նա էլ սկսեց.

— Էլե՛լ է չի էլե՛լ՝ մի սիրուն արտուտիկ:

Վառուցը սուր՝ մեր Սուրիկի քթի նման:

Բրմբուլը խուճուճ՝ Արմիկի մագերի նման:

Թևերը փափիկի, Արփիկի կուների նման:

Անա այսպէս սիրուն էր արտուտիկը:

— Բա ինձ նման ոչինչ չունէ՞ր, ասեց Վանին:

— Բա ի՞նձ, ձայն տրւաւ Հոփոսիկը:

— Ինձ էլ չասեցիր, տատիկ,— լաց էլաւ

Նազիկը:

—Սպասեցէք, սպասեցէք, երեխէք, դեռ չեմ վերջացրել. ամենքիդ էլ բաժին կը հասնի,—ասեց տատիկը և շարունակեց.

—Աշիկներն այնպէս նախշուն էին, ինչպէս Վանինի աչքերը:

—Կատարն այնպէս կարմիր էր, ինչպէս Հռիփսիկի թըշերը:

—Ոտներն այնպէս բարակ էին, ինչպէս Նազիկի մատները:

—Ես ոտներ չեմ ուզում, գանգատեց Նազիկը:

—Բա ի՞նչը կուզես, Նազիկ: Եթէ «տոտիկներ» ասեմ, կ՞ուզես, — ասում է տատիկը:

—Չեմ ուզում, ոչ ոտներ կուզեմ, ոչ տոտիկներ, ես աշիկներն եմ ուզում:

—Աշիկներն ինձ է տըւել տատիկը, քեզ չեմ տալ, գոչեց Վանին:

—Նազիկ, կուզե՞ս, կատարը դ՞ու վեր առ, տոտիկները ես կըվերցնեմ, ասեց Հռիփսիկը:

—Չեմ ուզում, ես աշիկներն եմ ուզում, պնդեց Նազիկը:

—Վանի, դու կատարը վերցրու, ես տոտիկները, իսկ Նազիկը՝ աշիկները, խնդրեց Հռիփսիկը, որ ամեն կերպ աշխատում էր հաշտութիւն ձգել:

—Ի՞նչ եմ անում կատարը, տատիկն ում ինչ որ տըւել է, այն է նրանը, պնդեց Վանին:

—Ճշմարիտ է ասում Վանին, ամեն կողմից գոչեցին երեխէքը:

Նազիկը գոհ չը մնաց և վէճը երկար շարունակեց, բայց տատիկը չէր լսում, նա գլուխը դրել էր բարձին և քնել, էլ չէին կարող զարթեցնել, վեր կացան իրանք էլ մտան տեղըները:

Միւս երեկոյին երեխէքը էլի հաւաքւեցին տատիկի մօտ, որ լսեն հէքիաթի շարունակութիւնը: Նա էլ սկսեց.

—Անցած զարնանը մեր պարտիզի ծառի վրա մի սիրուն կըկու կար: Ես նստած էի ծառի տակին, և դուք մէկ մէկ եկաք ինձ մօտ: Երբ որ Սուրիկը ներս մտաւ, կըկուն կանչեց. — Գճ՛ւ-կճ՛ւ:

Եկաւ Արմիկը, կանչեց. — Գճ՛ւ-պճ՛ւ:

Եկաւ Արփիկը, կանչեց. — Տճ՛ւ-տճ՛ւ:

Եկաւ Հռիփսիկը, կանչեց. — Գճ՛ւ-զճ՛ւ:

Եկաւ Վանին, ասեց. — Բճ՛ւ-բճ՛ւ:

Եկաւ Նազիկը, կըկուն էլ ոչինչ չասեց, թըռում, գնաց:

—Օ՛խ, Օ՛խ, Նազիկ, Օ՛խ, Օ՛խ, կըկուն քեզ համար ոչինչ չի ասել... միաբերան գոչեցին երեխէքը և ջրգրեցրին Նազիկին:

Նազիկը շատ նեղացաւ, թէ ինչու կըկուն նրա համար ոչինչ չի ասել և սկսեց լաց լինիլ:

Տատիկն ասեց. — Նազիկ, գիտե՞ս ինչու կըկուն քեզ համար բան չասեց. նա վախեց քեզանից: Ինչ որ ասէր, դու չըպիտի հաւանէիր, ուրիշն էլ իրանը քեզ չէր տալ, ինչպէս անցած երեկոյին:

—Տատիկ ջան, տատիկ, որ մէկ էլ կըկուն
գայ, ասա՛ ինձ համար էլ մէկ բան ասի. ինչ
էլ որ ասի, ես կընդունեմ,—աղաչեց Նազիկը և
այնուհետև շատ խելօքացաւ:



Պ Ս Ա Կ Ն Ե Ր

Վ Ա Ր Դ

Վարդ ծաղկին լինինք նման
Եւ օրինակ հեղութեան,
Թող վարդը հանգստանայ
Մեր մատաղ սրտի վրա:

Կ Ա Ղ Ն Ո Ւ Ո Ս Տ

Կանաչ խոտը դաշտերի,
Մեր սրտին է սիրելի.
Թող ոստը կաղնի ծառին
Պսակ լինի մեր գլխին:

Մ Ա Ն Ո Ւ Զ Ա Կ

Ազնիւ սիրուն մանուշակ,
Համեստութեան օրինակ,
Տուր մեզ ծաղիկ վեղեցիկ,
Քո քնքոյշ հոտն անուշիկ:

Կանաչ կարմիր պսակին
Թող միանանք միասին,
Եւ յոյսերըս յաւիտեան
Մեզնից լինին անբաժան:



Ո Ւ Լ Ե Ր Ն Ո Ւ Գ Ա Յ Լ Ը

Լինում է չի լինում՝ մի այժ: Այս այժը ան-
տառում մի տնակ է շինում և իր փոքրիկ ուլերի
հետ բնակում նրանում: Ամեն առաւօտ այժը
գուրս էր գնում արածելու, և գնալուց առաջ
ասում էր ուլիկներին.

—Որդիք, դուռը պինդ փակեցէք. հանգիստ
կացէք, և դրսից ով էլ գալու լինի, դուռը բաց
չանէք: Իսկ դաշտից վերադառնալիս պողբերով
բախում էր տնակի դուռը և ասում.

Չալիկ—մալիկ ուլիկներ,
Չալպրտուրիկ այժիկներ,
Ելէք դուռը բաց արէք,
Բերանները թաց արէք,
Ես ձեզ համար կուրծքս լի
Կաթ եմ բերել իւղալի:

Ուլերը բաց են անում դուռը, մայրը ծիծ է տալիս նրանց և կրկին գնում արածելու:

Այս ամենը տեսնում ու լսում է գայլը: Նա մտքումը գնում է, որ ուլերին խաբելով՝ ներս մտնի նրանց տնակը: Մի օր, երբ մայրը դուրսն է լինում, գայլը գալիս է կամաց—կամաց, թափով զարկում է դռանը և ասում.

Չալիկ—մալիկ ուլիկներ,
Չալպրտուրիկ այծիկներ,
Ելէք դուռը բաց արէք,
Բերաններդ թաց արէք,
Ես ձեզ համար կուրծքս լի
Կաթ եմ բերել իւղալի:

Ուլերը մի լաւ ականջ են գնում և հասկանում են, որ դուռը բախողը իրանց մայրը չէ, և պատասխանում են. — Դու մեր մայրը չես. մեր մօր ձայնը քաղցր է ու բարակ, իսկ քո ձայնը հաստ է ու խուպոտ. մեր մայրը դուռը պոզերովն է բախում, իսկ դու շանգուտում ես ճանկերովրդ: Մի քիչ սպասիր, անա մեր մայրը կը գայ, քաջ Բօղարն էլ հետը:

Բողար շան անունը որ լսում է գայլը, իսկոյն հեռանում է սուս ու փուս:

Ուլերի մայրը գալիս է, գովում է ուլիկներին և ասում. «Դուք լաւ էք արել, որդիք, որ դուռը բաց չէք արել, եթէ ոչ՝ նա ձեզ ամենքիդ էլ կուտէր»:

Կ Ո Ր Ա Ծ Ն Ո Ր Թ Ը

Ձիւն էր գալիս փաթիլ—փաթիլ,
Հեռն էլ անձրև կաթիլ—կաթիլ.
Այդ միջոցին մի պառաւ կին
Հորթ էր փնտրում դաշտի միջին:

Կովը եկաւ տաւարիցը,
Կուրծք ու ծըծեր կաթով լիքը.
«Հորթուկս ո՛ւր է», նա բառանչեց,
Խեղճ պառաւին լացացրեց:

Մինչդեռ այսպէս պառաւ ու կով
Ողբում էին լաց ու կոծով,
Յանկարծ լաւեց մի բարակ ձայն,
Կովն իմացաւ, որ հորթն է այն:

Կովը վազեց բառանչելով,
Իսկ պառաւը՝ տընքտընքալով,
Կորած հորթը մօրը գտաւ,
Լիք ծըծերը բերանն առաւ:

Ծըծեց բոլոր կաթն ու տկզեց,
Տանտիկնոջը բան չըթողեց,
Բայց պառաւը այս անգամին,
Միրով ներեց չար հորթուկին:



ԱՆՏԱՌԻ ՄԱՆՈՒԿԸ

1.

Անտառի խորքում մի ճօճ կար կապած և նրա մէջ մի մանուկ դրած: Լաց էր լինում մանուկը: Մայր չըկար մօտը, որ ծիծ տար, հայր չըկար, որ պահպանէր: Անտառումը մարդ չըկար:

Մի գլխոտ պախրակով՝ կաթնալից կըծքով՝ եկաւ ճօճի մօտ իր հորթուկի հետ և տխուր ձայնով երեխին ասեց.

Սիրուն երեխայ, որը ես մնացել,
Քո անբախտ մօրը գերի են տարել.
Նա գնաց, կորաւ, էլ յետ չի գալու,
էլ ոչ մի անգամ քեզ ծիծ՝ չի տալու:
Նա քեզ փաթաթեց լայն տերևներով,
ձօճի մէջ կապեց, «նանիկ» ասելով.
Նա լաց էր լինում աղի արցունքով,
Իր վերջին նանիկն ասում էր լալով.

«Մեծատերև թաթաշոր,
«Մանրատերև ոտաշոր,
«Քամին կանի՝ ժաժ կըտայ,
«Պախրէն կը գայ՝ ծիծ կը տայ»...

Ահա եկել եմ, որ քեզ ծիծ տամ ես,
Պահեմ, պահպանեմ իմ հորթուկիս պէս:

2.

Պախրան ծիծ տըլաւ երեխին. երեխան կշտացաւ ու բնեց: Պախրան իր հորթին թողեց երեխի մօտ, իսկ ինքը գնաց մօտերքում արածելու, որ կաթը շատացնի, և գայ երկուսին էլ ծիծ տայ: Հորթը մնաց երեխի մօտ, օրօրեց նրան և նանիկ ասեց.—

Նանիկ արա, նանիկ, նանիկ.
Նանիկ արա, սիրուն մանկիկ.

Ահա կը գայ իմ մայրիկը,
Կուրծք ու ծըծեր կաթով լիբը.
Ամեն գետնի նա չի նստում,
Ամեն խոտից նա չի կըծում,
Նա չի խմում ամեն ջրից,
Աղ չի լիզում ամեն հողից.
Նա սարէսար ման է գալիս,
Որը է գտնում, ծիծ է տալիս.
Որտեղ որ է, ահա կը գայ,
Ինձ էլ, քեզ էլ կուշտ ծիծ կը տայ.
Նանիկ արա, նանիկ, նանիկ,
Նանիկ արա, սիրուն բալիկ...

Պախրան կուրծքը լիբը յետ դարձաւ արօտատեղից և ծիծ տըլաւ երեխին էլ, հորթին էլ:

Ով որ տարով կը մեծանայ, մեր երեխան օրով մեծացաւ: Չատ չանցաւ նա դուրս եկաւ ճօճիցը, մէկ օր չորեքթաթ տըլաւ, միւս օրը ոտքի կանգնեց, մի քանի անգամ սահեց, վայր ընկաւ, բայց շուտով ամբացաւ և սկսեց պախրի հետեից վազվզել:

3.

Մի թագաւոր որդի չունէր. երագումն ասացին. «Թագաւոր, Աստուած քեզ մի որդի պիտի տայ անտառի խորքումը»:

Մէկ անգամ անգաւակ թագաւորը որսի գնաց իր որսորդների հետ: Չատ ման եկան ոչինչ չը գտան, բայց որ հասան անտառի խորքը, այնտեղ մի պախրի հետը գտան և նրա մօտ մի երեխի ոտնատեղեր:

Ամենքը մնացին դարմացած և չէին հաւատում որ երեխի կը լինի ոտնատեղերը. բայց թագաւորն իսկոյն յիշեց իր երազը և հրամայեց որսորդներին, որ երեխի հետըը բշեն և ուր որ լինի՝ գտնեն նրան:

Որսորդները գնացին և երկու ժամ չանցած, մի սիրուն տղայ բերին թագաւորի մօտ և պատմեցին, թէ ինչպէս գտան նրան պախրի ծիծը ծըծելիս:

Թագաւորը շատ ուրախացաւ, երեխին գրկեց, համբուրեց և անունը դրաւ Պախրատուր: Պախրատուրը մեծացաւ թագաւորի պալատումը, լաւ ուսում առաւ, վերջը դառաւ թագաւոր և մեծ գօրքով գնաց իր մօրն ազատեց զերութիւնից:

ՈՐԻՒ ՊԱՆՈՂՆ ԱՍՏԻԱԾ Է

Փայլուն արեւ արդէն մայր մտաւ,
Լուսինն էլ վաղուց գնաց թաք կացաւ.
Իշերեւա մութը աշխահըս պատեց,
Եւ աշնանային ցուրտ քամին վշեց:

Ամեն մարդ քաշեց իր տունը մտաւ,
Ամեն երեխայ մօր զիրկն ընկաւ,
Միայն խեղճ որբը, որ չունէր հայր, մայր,
Ոչ մի ազգական, ոչ քոյր, ոչ եղբայր,
Ոտքերը բորիկ, տկո՛ր ու քաղցած,
Մի տան պատի տակ մնաց կուշ եկած:

Բարի տան— տէրը, վերեւից նայեց,
Մեր թշառ որբին ներս հրաւիրեց
Եւ այնուհետև տարաբախտ տղան
Ունէր իր համար տէր ու տիրական:



ԳԻՒԼՆԱԶ ՏԵՏԻ ԹՈՌՆԵՐԸ

Մէկ անգամ Գիւլնազ տատին շրջապատեցին իր թոռները և ստիպեցին, որ տատը թռչնիկներ շինէ նրանց:

Տատն էլ վեր առաւ փոքրիկներից մէկին, դրաւ ծնկան վրայ, երկու ձեռքից բռնեց և վեր ու վայր թափ տալով երգեց.

Ղո՛ւ—ղո՛ւ—ղո՛ւ, ա՛ դու—դո՛ւ.

Նա՛կ, նա՛կ, ա—դու—նա՛կ, թը՛ռռռ...

Յետոյ մի ուրիշն ընկաւ տատիկի զիրկը և ասեց.

—Տատիկ ջան, տատիկ, ինձ էլ մի կաշաղակ շինես...

Տատիկը նրան էլ դրաւ ծրնկներին և առաջան պէս երգեց.

Չա՛—չա՛—չա՛, կա՛—չա—չա՛,

Ղա՛կ, ղա՛կ, կա—չա—ղա՛կ, թը՛ռռռ...

—Տատիկ ջան, տատիկ, ինձ էլ մի ծիտիկ շինես, ասեց ամենից փոքրիկը:

Տատիկը նրան էլ վեր առաւ և վեր ու վայր թըռցնելով երգեց.

Ծիտ եմ, ծիտ եմ, ծլւլում եմ,

Ծի՛ւ, ծի՛ւ, ծի՛ւ.

Ոստոստում եմ, թռչկոտում եմ,

Տի՛ւ, տի՛ւ, տի՛ւ.

Արի, թիփիկ, արի, փետրիկ,

Որ ես դառնամ փոքրիկ ծիտիկ,

Փոքրիկ ծիտիկ, պիծիկ—միծիկ, թը՛ռռռ...



Մ Ա Ն Կ Ա Կ Ա Ն Խ Ա Ղ

Պ Ա Ռ Ա Ի Ը

Ջո՛ւ—ջո՛ւ—ջո՛ւ—ջո՛ւ, իմ վառիկներ,
Սիրուն ճուտեր, հաւ մարիկներ,
Ոսկեփետուր արլարիկներ,
Եկէք կերէք ձեր հատիկներ:

Մ Ա Ն Ո Ի Կ Ն Ե Ր

Չար փիշիկը մօտ է գալիս,
Սև ձագին է մտիկ տալիս.
Թաթը մեկնե՛ց, վզից բռնե՛ց
Աքաղաղնե՛ր, հաւ մարիկնե՛ր,
Պահպանեցէք ձեր ճուտիկներ:

Ա Ք Ա Ղ Ա Ղ Ն Ե Ր

Հասէք, հասէք. օղնեցէք,
Չար փիշիկին պատժեցէք:

Հ Ա Ի Ե Ր

Ժողովուհներ, միանա՛նք,
Չար կատին վրայ տանք:

Բ Ո Լ Ո Ր Ը

Տեսա՛ք, տեսա՛ք ինչ եղաւ,
Դո՛ղ կատուն որ մեզ տեսաւ,
Խիստ վախեցաւ ու փախաւ.
Ուրեմն ապրինք միասին,
Որ մօտ չըգայ թշնամին:



ԱՌԱԻՑՏԻԱ ԱՂՕԹՔ

Ո՛վ Տէր մեր գլթօտ, Դու լոյս առաւօտ,
Ծագիր և մեզ մօտ Քո լոյսդ անաղօտ:
Թող լուսաւորին մեր միտքն ու հոգին,
Որ Քո լոյս անւան լինինք փառաբան:

Յանուն Հօր և Որդոյ և Հոգւոյն Սրբոյ. ամէն:

ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր, Որ յերկինս ես, սուրբ եղիցի
անուն Քո, եկեսցէ արքայութիւն Քո, եղիցին
կամք Քո որպէս յերկինս և յերկրի: Զհաց մեր
հանապազօրդ տուր մեզ այսօր. թող մեզ զպար-
տիս մեր, որպէս և մեք թողումք մերոց պար-
տապանաց. և մի՛ տանիր զմեզ ի փորձութիւն,
այլ փրկեան զմեզ ի շարէ. զի Քո է արքայու-
թիւն և զօրութիւն և փառք յաւիտեանս. ամէն:

ՄԱՆԿԱԿԱՆ ԱՂՕԹՔ

Հայր մեր երկնաւոր, Հայր ամեն մարդի,
 Գու ինձ ամեն օր տաս հազար բարի,—
 Կեանք, լոյս, կերակուր, հայր ու քացրիկ մայր,
 Մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղբայր:
 Իսկ ես ի՞նչ ունիմ որ ինչ տամ Քեզի.
 Առջևդ կընկնիմ, կենամ աղօթքի—
 «Ջնորհրդ տուր ինձ, որ ծնողներիս,
 Վարժապետներիս և իմ մեծերիս
 Լինիմ սիրելի, իսկ Քեզ՝ հաճելի»:



ՀԱՐՄԱՆ
3097

Թողաորում են պատշաճաւոր իշխանութիւնից .

Ուսումն Մայրենի լեզւի . Ա տարի . . . 25 կ.
 Ուսումն Մայրենի լեզւի . Բ տարի . . . 30 կ.
 Ուսումն Մայրենի լեզւի . Երրորդ և
 յաջորդ տարիների համար . . . 65 կ.

Գումարով գնողներին 20% զիջումն:

ՊԱՇԵՍՏԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌ-ԱՆՈՅՈՒՄ

Գիմել՝ Въ Тифлисъ. Въ Центральную Книжную Торговлю.



«Պատկերաւոր Այրբենարան»-իս գինն է 15 կօպ:

Պահեստը Թիֆլիսի Կենտրոնական և Գուստներեք գրափաճառանոցներում, ուր գրքերից գումարով գնողներին բաւարար զիջումն կը լինի:

Հեղինակին կարելի է միայն անձամբ գիմել:

2013

3198

<< Ազգային գրադարան

NL0062248

